Պաշտպանե՛ք ձեզ կրծքի քաղցկեղից Իմացեք փաստերը

Կրծքի քաղցկեղի զննումները կյանք են փրկում

ԿՐԾՔԻ ՔԱՂՑԿԵՂՆ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ ՔԱՂՑԿԵՂՆ Է ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿԱՆԱՆՑ ՄՈՏ

Կրծքի քաղցկեղի զննումները կարող են գտնել քաղցկեղը, նախքան մարդը որևէ ախտանիշներ կցուցադրի: Ինչքան շուտ է հայտնաբերվում քաղցկեղն, այնքան ավելի հեշտ է այն բուժել: Բժիշկները կարող են շուտ հայտնաբերել կրծքի քաղցկեղը մամոգրաֆիայի միջոցով:

Մամոգրաֆիան կրծքի ռենտգեն պատկերն է: Մամոգրաֆիան լավագույն միջոցն է շուտ հայտնաբերելու կրծքի քաղցկեղը, քանի դեռ այն շատ մեծ չէ շոշափելու համար և ախտանիշներ չի ցուցադրում:

Ձեր ընտանեական բժիշկը կարող է նաև ստուգել կուրծքը ֆիզիկական ստուգման ընթացքում՝ տեսնելու, եթե կան որևէ գնդիկներ և այլ փոփոխություններ:

Հետևեք ձեր կրծքին: Իմացեք, որն է ձեր կրծքի նորմալ զգացողությունն ու տեսքը: Տեղեկացրեք ձեր բժշկին, եթե որևէ փոփոխություն եք տեսնում կամ զգում:

Զրուցեք ձեր բժշկի հետ այն մասին, թե երբ է պետք սկսել կրծքի քաղցկեղի զննումները և ինչքան հաճախ պետք է մամոգրաֆիա անեք, մասնավորապես, եթե դուք բարձր վտանգի գոտում եք (օրինակ՝ կրծքի կամ այլ քաղցկեղների ընտանեկան կամ անձնական պատմություն):

Կրծքի քաղցկեղի որոշ զգուշացման նշանները և/կամ ախտանիշները ներառում են՝:

- Գունդ, զանգված կամ ուռուցք կրծքում կամ թևի տակ,
- Կրծքի չափսի կամ ձևի փոփոխություններ,
- Կրծքի կամ պտուկի մաշկի կառուցվածքի կամ գույնի փոփոխություն (փոսիկներ, կնճիռներ, կարմրություն, մաշկի թեփուկներ կամ հաստացում),
- Պտուկի ներքաշում կամ շրջում,
- Արտադրություն պտուկից, և/կամ Կրծքի ցավ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ այս զգուշացման նշանները և/կամ ախտանիշները կարող են տեղի ունենալ կրծքի քաղցկեղից բացի նաև այլ դեպքերում:

Դուք կարող եք որակավորվել կրծքի քաղցկեղի ԱՆՎՃԱՐ զննման համար, եթե դուք՝

- ✓ 40 տարեկան կամ ավելի բարձր տարիքի եք
- ✓ Ցածր եկամուտ ունեք
- ✓ Ապահովագրություն չունեք կամ այն սահմանափակ է
- ✓ Ապրում եք Կալիֆորնիայում

Այսո՛ր զանգահարեք մեզ:

Պարզելու համար, եթե դուք որակավորվում եք «Յուրաքանչյուր կին պետք է հաշվի առնվի» Every Woman Counts ծրագրի համար, զանգահարեք մեզ **1-800-511-2300** հեռախոսահամարով:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք այս կայքէջը՝ **dhcs.ca.gov/EWC**

DHCS
California Department of HealthCareServices